



ԵՐԵՒԱՆ

ՀԱՅԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԲԱՐՈՒՆԻՆԻ

ԹԻՒՆՍԵԱԼ ՀԱՅԿԱՆԱՍԻՐ ԹԵՒՕՐ
ՅԱՐԾՐՈՒՆԻ ԳԱՀԷՆ Ի ՎԱՆՏՈՍՊ
ԹԻՒ Տ — ՀԱՅԵՆՍԻՐԵՐ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ԻՒՍԲԻՏԵՐ

ԸՆԴ ՀՈՎԱՆԵԱՒ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ
Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԾՈՒՈՅՆ ՎԱՍԿՈՒՐԱՆՆ

1855 — ԻՅԴ



1905

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

500 EAST 57TH STREET

CHICAGO, ILL.

1905

1905

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

1905



ԵՐՇՈՒՒ

ՎԱՍՊՊՈՒՐԱԿԱՆ

ԹՈՒՌՅԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԹԵՒՕՔ
ՅԱՐԾՐՈՒՆԻ ԳԱՀԷՆ Ի ՎԱՆՏՈՍՊ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 5

1855

ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

Ի ՍԻՍ

Այն ինչ հասանէր մեզ մտանել
ընդ դուռն Տորոսեան լերանց . ով,
որպիսի տեսարան իմի ամենազուարճ
եւ ցանկալի տարածեցաւ առաջի ու
ղեւորիս աչաց . որով յափշտակեալ
եւ ակնպիշ եղեալ միանգամայն ան-
յաղ տենչանօք դիտել սկսայ ընդ

գեղեցկաշար բիւրաշղթայ բազմա-
տարած լերինս, պարզեալ ձգեալ ընդ
չորս կողմունս խիտ զմիմեամբք անց-
եալ, ի հիւսիսոյ առ հարաւ . ի հա-
րաւոյ առ հիւսիս, յարեւմտից յա-
րեւելք, յարեւելից յարեւմուտս,
ընդ որ սքանչանայ ճարտարադիւծ եր-

կրաչափն մինչ վաստակ լինի նկատել
զամբաւ դիրս նոցա եւ ճիշտ գծա-
գրել 'ի տախտակի . զոր ձեռն հան-
ճարոյ ամենարուեստ ճարտարապետին
միով բանիւ 'ի միում վայրկեանի գծա-
գրեալ գոյացոյց յոչնչէ զանբաւու-
թիւն լերանց եւ բլրոց :

Գեղեցիկ էին նաեւ աչաց հայերոյ
եւ այն մթնագոյն կանաչազարդ ան-
տառք 'ի հինաւուրց անտի հառաբա-
մառ բաձրացեալ ընդմէջ խորագոյն
ձորոց եւ 'ի վերայ բարձրագագաթ
լերանց . որոց ախորժական հովանիք
եւ տերեւոց հովահար ոռափիւն ըզ-
մայլեցուցանեն զուղեւորն :

'Աս մանաւանդ մինչ զաչս ընդ վայր
կոյս յաճեալ 'ի բարձրութենէ անտի-
տեսանեա զբազմութիւն գետոց , որ
անցեալ գնան ոլորուն ընթացիւք ,
որոց խորածայն քարափէժ գլղբիւն
խառնեալ ընդ սօսաւիւն անտառաց .
հեշտութիւն քաղցր բերեն եւ դիւր
ածեն միանգամայն խոնջեալ վաստա-
կաբեկ ոտից ճանապարհորդին :

Ինդ զառ 'ի վայր եւ զառ 'ի վեր
դժուարապտոյտ առապարս ել եւ էջս
բազում արարեալ իբրեւ 'ի հանգիստ
իջաք յեզերս գետոյ միոյ , որ 'ի կիրճս
երկուց բարձրաբերձ լերանց անցեալ
գնայր սահանակարկաջ ընթացիւք :

Քաղցր եւ հեշտալի եղեւ մեզ յոյժ
բացօթեոյ գետեղերս . առ որով տընկ-
եալ կալին հինաւուրց հազարամեայ
կաղնիք եւ նոճիք , որոց բազմաստեղն
ճիւղոց ընդարձակագոյն հարուստ հո-
վանիք բաւական եղեն հանգուցանել
զմեզ 'ի ներքոյ իւրեանց եւ լինել
աստիճական հանգոյն Աբրահամեան
հիւրընկալիչ կաղնոյն Մամբրէի :

Ընդ ոչ պիտոյ լինէր հիւրասէր սպա-

սահարկ նահապետին խոնարհամիտ
ծառայութիւն ջուր ածել ամանով
խոնջեալ ոտից 'ի դիւրութիւն եւ 'ի
զովացումն . քանզի ելից գետն զայս
ծառայական պարտն առատահոս ջրով
զովացուցեալ զոտս մեր . եւ փոխան
վերնայարկ ծածկութիւն անձեռագործ
տուն եւ կամայաչէն խորան կազմ-
եալ էր մեզ նոճեայ ծառոյն զուար-
թատերեւ շուք՝ որ զօրէն Յովնան-
եան գիշերաբոյս դիմենւոյն՝ հովանի
եւ պատսպարիչ գտաւ արեւահար
գլխոյ մերում :

Քաղցր էր մեզ անդանօք քարուտ
խտմբեր չոր գետին քան զվափուկ
բազմոցս շքեղաչէն ապարանից . յորոյ
վերայ նստեալ հանգչեցաք յեցեալ
ընդ հաստաբուն արմատ նոճի ծա-
ռոյն . եւ յուշ եկին ինձ յայնժամ
քաջազուն բողբոջք Ռուբինեան
արմատոյն , որ երբեմն շառաւիղար-
ձակ ճոխութեամբ բարձրացեալ էին
'ի միջոյ Տորոսեան լերանց :

Եւ զայս զմտաւ ածեալ հառաչեցի
ցաւօք , հեշտութիւն հովանեաց՝ դար-
ձաւ ինձ արեւ տապալմարշ եւ ըստ
Յովնանու քաղէին եւ ոգիք իմ .
Ուստի ձայն առ անբանաւորս արկ-
եալ հարցանէի լալով . այ բիւրաւոր
լերինք եւ բլուրք եւ գետք եւ հո-
վիտք եւ ձորք եւ խուռններամ ան-
տառք Տորոսեան պատմեցէք ինձ այսօր
զաշխոյժ քաջակորով Հայկազուն պա-
տանեկաց , որ երբեմն զօրէն ազատ
էրէոյ շրջէին երամով 'ի միջի ձերումն
Արդ ուր են այնոքիկ , ասացէք ինձ ,
ոհ , մի թէ փոխանակ խոնարհեալ
փառաց եւ վերջին շքոյ Ռուբինեան
իշխանութեանց , դուք միայն բարձ-
րացեալ մնացիք , լերինք եւ բլուրք

եւ ընդ հսկայապերձ՝ գեղաշիտակ
Հայկասերունդ հասակացն՝ դուք
ո՞վ անտառք վաղեմի, միայն բարձ-
րացեալ կայք ցարդ եւ մի թէ հողմ
սաստկաշունչ չկարաց երբէք խել
զձեզ յարմատոյ . որ այդպէս առոյգ-
աբարձ սաղարթածոխ զուարթու-
թեամբ ծափս հարեալ ոստովք ձե-
րովք զուարճանայք 'ի միջի լերանցս :

Այլ որ առ հեռաւորս ձայն բարձ-
եալ հարցանէի, պատասխան 'ի մօ-
տուստ լուայ, զի հողմաշարժ տե-
րեւք ծերունազարդ նոճեայ ծառոյն
գոգ թէ բարբառ արձակեալ խօսե-
ցան ընդիս : Ի վեր հայեաց, ո՞վ ուղեւ
որդ հայրենաշրջիկ, 'ի վեր հայեաց արդ
որ զքրտնահար թիկունսդ 'ի մայրդ
մեր յեցեալ հանդիստ առնուս այժմ
ընդէր թողեալ զհինաւուրց ծերդ՝
որում մերձ կաս, 'ի հեռաւորաց խըն
դըրես պատասխանի, հարց այտի եւ
պատմեցէք քեզ :

Եւ ծեաց անդէն ծերացեալ նոճին
եւ իբրու զնախնի Խորենեան հարիւր
ամեայ ծերունին ողբս 'ի բերան առ-
եալ խօսիլ սկսաւ :

«Արդարեւ, ո՞ հիւրդ իմ տխուր,
այդ վայելչութիւնք լերանց, հովտաց,
գետոց եւ հովասուն անտառաց քեզ
տեսարան վշտաց երեւին, որ առ
ցաւոց սրտիդ 'ի քէն ելեալ եւ իբրեւ
ուշամուաց յանբան տնկոց հարցա-
նես զշիջելափառ հայրենեացդ :

Այո՛ իբրեւ հնապատում ծեր որ
կարեկից լեալ քեզ ասացից զերջանիկ
աւուրն . յորում Ռուբինեան բարձ-
րաթուիչ Արծուկք 'ի վերայ ամրոստ-
եան ճիւղոցս հանգչէին եւ կորիւնք
Առիւծուց առ հանգուցիչ հովանեօքս
նստեալ մռնչէին ահ արկանելով թըշ-

նամեաց . Ռուբէն այն քաջ, Ասպետն
Ղոստանդին, Առիւծազօր Լեւոնեանք,
իշխանասատ թորոս, գերիչ Յունա-
կան իշխանացն եւ տիրող միագամայ-
ծովու եւ ցամաքի . անփառասէր թա-
գընկէց Հեթում վանակեաց :

Ո՛հ, ապաւեցան այս քաջարմատ
շառաւիղք 'ի Տորոսեան լերանցդ .
որք երբեմն իբրու զիս արմատս ձգեալ
հաստատեալ բարձրացեալ կային :

Որ այժմի խոնջեալ նստիս առ ինեւ
եւ չգտեալ դէ՞թ զմի որ 'ի նոցանէ
քեզ 'ի հանգիստ՝ կարօտիս յենուլ այդ
պէս 'ի յիս եւ հանգիստ առնուլ :

Աւա՛ղ դժբախտ ուղեւորութեան
հայրենասիրիդ, զի ոչ դիպաւ քեզ
տեսանել զօրն . յորում խիտ առ խիտ
տնկեալ կային 'ի մէջ Տորոսեան լե-
րանց ծառք ամբարձուղէշ եւ բո-
լորասիւիւ, որ ըստ տեսեան Նաբու-
գոտոնոսորեան ծառոյն, առ հովանեօք
եւ յոսոս իւրեանց հանդուցանէին
զաշխատեալ եւ զխոնջեալ մանկտին
Հայոց : Արդ զըկեալքո յանպիտում
քաղցր պատասպարիչ հովանեացն եւ
'ի սատարութենէ անխպտակելի հաս-
տարան գաւազանացն՝ եկեալ այդ
պէս յիս յենուս եւ ինեւ դիւրու-
թիւն տաս անձինդ պարտասելոյ եւ
յուշ բերեալ զնախկին զերջանկու-
թիւն եւ զառաջին փառացն Տորոս-
եան՝ յողւոց հանեալ լաս . փոխանակ
քաղցրոտոգ ջրոց գետոյդ՝ աղի ար-
տօսր ցօղեալ իջուցանես 'ի խորագոյն
արմատս իմ, զոր արեալ ծծեալ
քստմնին 'ի վերուստ ոստք գեղազու-
արձ ճուղոցս եւ առ հասարակ դեղ-
նեալ տխրութեամբ եւ խամրեալ թօ-
թափին 'ի վայր տերեւք իմ կանաչա-
զարդ : Դու որ այժմ իբրեւ 'ի պատ-

կերի յիս նշմարեալ տեսանես զուրբ
անցելոյ փառաց մեծի տանն Ռու-
բինեան, եղևի, յայնժամ զիս եւս
անփառունակ տեսեալ ըստ նմանու-
թեան ծառոց գօսացելոց՝ յաւելուն
քեզ յաւք նորանոր դառնակսկիծ
եւ խնդրես գէթ մխիթարիլ վարսա-
գեղ ալեգարդ ծառոյս փառօք՝ փո-
խան զօրութեամբ ծաղկեալ իշխա-
նական գաւազանին Ռուբինեան՝ որ
բարձրացեալն էր երբեմն ՚ի վերայ գա-
հուն Վիլիկիոյ, թագապանծ վայելչու-
թեամբ համայնից բաղձալի հանդի-
սացեալ . ընդ որ չարակնութեամբ
մախայր Յունաստան հատանել բառ-
նալ եւ միանգամայն մօտակտուր
առնել զնորոգ բղխեալ եւ ծաղկեալ
գաւազանն Ռուբինեան յարմատոց
Բագրատունեոյն ասեմ եւ Արշակու-
նեան : Ոչ շատացաւ միայն ՚ի բնիկ
գարաստանէն Անույ խել եւ քան-
դել ՚ի ձեռն պատիր հնարից եւ բռ-
նութեան . այլ մինչ ետես եթէ հատ
եալ շառաւիղն միւսանգամ բողբոջեալ
բարձրացաւ յանկարծ ՚ի սահմանիս
Վիլիկիոյ . աւանդ, զձեռն նախանձու
ձգեալ եւ աստուտ խել ջանաց
գցեղուղէջ գաւազանն : Եւ մինչ
զօրութեամբ պարարտ արմատոյն
միշտ ծիլ արձակէր ՚ի վեր . զայն եւս
հուրն Եգիպտոսի հարեալ տոչորեաց
եւ իսպառ կիզեալ անհետ արար միան
գամայն զարմատն եւ զընծիւղն :
զի թէպէտ պատիր պատդամաւորութե-
ամբ ՚ի հեռուստ անտի յուսադիր
լինէր Հռոմն ձեռն սատարութեան
տալ եւ խոստանայր մեծամեծ բանիւք
պաշտպան կալ եւ պահել զնորստունկ
բողբոջն ՚ի ձեռաց թշնամոյն : Այլ
եղևի ասեմ. ականջացն, որ սրտի

մտօք ունկն դնէին սուտ սարգարէա-
կան խոստմանցս այսոցիկ, որպէս եր-
բեմն Իսրայէլեան ազգն այն հաւա-
տայր առասպելապատում բանից կեղ-
ծեալ մարգարէիցն այնոցիկ : «Թէ
ոչ մատնի Երուսաղէմ ՚ի ձեռն Նա-
բուգոտոնոսորայ արքային Բաբելա-
ցւոց» . զորոց ստուծիւնք յայտնե-
ողբասաց Երեմիան . «Մարգարէքն
տեսին քեզ տեսիլս զուր տարապար-
տուց եւ անօգուտ . եւ պատմեցին
քեզ առեղծուածս սնոտիս» :

Այլ ցերբ ՚ի ներքոյ նոճուոյն նշատ
եալ լուիցես յինէն զայսպիսիս, հե-
րիք եղեւ Արծուոյդ Վասպուրականի
առ հովանեօքս օթագայիլ եւ զՎիլիկ-
եան նախնի փառացն՝ միայն ՚ի բազ-
մամեայ ծերոյս հարցանել : Հապա
թուիր բարձրացիր արդ եւ յայլ ու-
րեք նստեալ հարցցիր եւ պատմեսցեն
քեզ :

Ուր թուայց, ուր իշից, ուր օթե-
ցայց . զի յամենայն ուրեք յաճախ-
են ինձ հառաչանք ցաւոց :

Սոսովիւնք անմարդի անտառաց ոչ
հովածեն ինձ անոյշ . այլ մրմուռն
աղէտաճայն, երամբ երգախօս թու-
նոց ոչ բերեն հեշտութիւն ականջաց .
այլ ողբումն դառն եւ աշխարումն
յոյժ . սահումն քաղցրակարկաջ շուրց
աղբերց ՚ի կողերց լերանց՝ թուին
ինձ կայակահոս լալիք աչաց . քաղցր
տեսիլ գեղազան քնքուշ ծաղկանց,
չեն զուարճութիւն ական հայելոյ .
այլ իբրու գծնիկ փուշ քստմնեցուց-
նեն զաչս . հովիտք շուշանաղեղ, ոչ
համարին ինձ տեղիք վայելչութեան .
այլ յաւէտ վայրք վշտաց եւ տրտմաւ
թեան :

Հոր վայր ապա գտից ես հանդիստ

ահա բարձր սահմանք Տորոսեան լե-
րանց առհասարակ բերեն հանեն 'ի
դէմն իմ զնոր նոր ցաւոց ապաժոյժ
տեսարան : Եթէ յամուրն վահկայ
իջից իբրեւ յերկրորդ օթանոց , անդ
ահ գոյ եւ երկիւղ . զի չէ անտանօր
մենամարտ վահանակիրն եւ քաջ
ախոյեանն Վոստանդին . եթէ մերձ
նմին 'ի Վաստաղոն , անդ եւս հառա-
չանք ոսկերաց քաջաց շիրմից դարձ-
եալ մշտացուցանեն զիս . ուր ննջեն
զքուն ահաւոր Ռուբէն մեծ իշխանն
եւ Ասպետն Վոստանդին . եթէ
մենաստանն Դրազարկ , անդ ոչ է
վանականն Բարսեղ ճոն կոչեցեալ .
որ յարգելով զիս վանատու լիցի թա-
փառելոյս 'ի վերայ Տորոսեան լեռանց .
եւ ոչ իսկ եւ ոչ մի , ո՛հ , միաբանու-
թիւն Վուրբ եղբարց , որք մերկաց-
եալ տոկացեալ յաշխարհէ իբր 'ի
հանդիստ յանապատ զիմէին ազատ-
եալք 'ի բազմագիմի աղէտից կեն-
ցաղէոյս . որոց հոգեւոր կենակցու-
թեան փափագէր երանելի Հեթում
արքայն , թողոյր յօժարակամ զարքու-
նական թագ եւ զծիրանին երթեալ
խառնէր 'ի գունդս ժուժկալատէր
եղբարցն : Արդ ուր այս հրեշտակ-
երամ դատուց խումբ . ուր նոցին
մշտամուռնչ ձայնք եւ օրհնութիւնք
սաղմոսաց . որ անդադար 'ի խորագոյն
հովտաց աստի հնչէին 'ի վեր եւ ան-
դուտ զքաղցր ցօղոյ Աստուածային
շնորհաց առատութիւն իջուցանէին
'ի վերայ թագաւորական դարաստա-
նին Վիլիկիոյ . որով օրրատօրէ զուար-
թացեալ աճէր եւ զօրանայր դաւա-
ղանն իշխանութեան : Ո՛հ , մի թէ
'ի դադարմանէ օրհնութեանցս եւ
'ի պակասելոյ . զուարթարար ցօղոյն

ցամաքեալ գօսացաւ դաւաղանն այն
այն , վկայէ այսմ Իմաստունն Դաւ-
թեան . « Օրհնութեամբ արդարոց
բարձրանայ քաղաք » : Ապա յայտ
իսկ է , 'ի նուագիլ արդարոց եւ նոցին
հաշտարար ընծայական աղօթիցն .
ոչ միայն յաշխարհէ , այլ եւ յանա-
պատական մենաստանաց , խոնարհե-
ցաւ դաւաղանաւն իւրով վերջն
բարձրացեալն իլիլիկիս :

Այլ քեզ բաւ եղեւ այսչափ , ո՛հ
Արծուիդ դեգերիլ դառնահառաչ
ողջով 'ի մէջ գժուարին Տորոսեան
անմարդի լեռանց . յորս թէ երկար
աստանդեալ շրջեցիս . անհնար է
քեզ գտանել՝ զոր միանգամ խնդրէ
անձն քո . կամ գէթ զնշոյլ ինչ աղօ-
տագին 'ի շիջելափառ ջահէն Ռու-
բինեան , առ որում նուազ լուսով իբ-
րու զթիթեռն այն ճրագատէր . թեւ
ածելով հրճուեսցիս . այլ զրկեալ դու
յայսմ յուսոյ՝ յամենայն ուրեք լինին
քեզ տրամառիթ տեսարանք . վահ-
կայ անմատոյց լեռնագագաթ բեր-
դին մնացեալ ամբուլութիւնք շնուա-
ծոց . յորս ողջիկ երեւին ցարդ խորա-
դոյն աւազանք եւ ոչ 'ի նոսին ջուրք
հնաշէն ապարանք . եւ ոչ 'ի նոսա
իշխանական Աթոռն . մեծամեծ զօ-
րանոցք եւ ոչ զօրք եւ զօրութարք .
Տերունեան պաշտելի նշան խաչին
'ի վերայ կամարացն դրոշմեալ եւ ոչ
կան պատրաստ առաջի երկրպագու
դուխք : Այսպէս եւ Վաստաղոն եւ
Դրազարկն եւ այլ բազում լեռնաշէն
Վանորայք , ունայն եւ թափուր տե-
սանին յառաջին բարեղարդութենէն
իւրեանց :

Տաճարք կամարաշէն եւ ոչ 'ի նմա
պարաւորութիւնք հրեշտակական դա

սուց՝ խորան , եւ ոչ շրջող՝ բուրմամբ անուշահոտ խնկոց . սեղան , եւ ոչ քահանայ կամ Պատարագ հաշտարար ընծային . դաւիթ , եւ ոչ տաւաղեալ 'ի միջի նորա ոչխարաց հօտ . բոյնք փոքրիկ անպաճոյճ սենեկաց , եւ ոչ աղանամնչիւն աղօթողացն երամք : Բազումք եւս 'ի վաղաշէն վանօրէից աստի բողբոլին յաւերակ դարձեալ , ժիպն 'ի քարակոյտ մնացեալ նշխարացն նշմարին . եթէ երբեմն լեալ նոքին տեղիք միաբանական ուխտից :

Օ՛ն հապա զաչաքոյին կափուցեալ 'ի տխուր տեսչենէ աստի , թուցեալ 'ի միջոյ լերանցս՝ էջ եւ նիստ արագապէս 'ի վերայ բարձրաւանդակ լերինն . որ ըստ նմանութեան Արագածու ուղղորդ բուսեալ 'ի յերկրէ արեգակնաճեմ գագաթամբ ամբարձեալ է յարեւ կոյս 'ի ծովատարած խորադաշտին Նիլիկոյ : Ուր կացեալ՝ շրջահայեաց լեր աւագ աչօք եւ լաց անդուստ զարքայարանն Սիս . որպէս Տէրն երբեմն նստեալ 'ի Չիթենեաց լեռն ելաց զԵրուսաղէմն , որ հանդերձեալ էր դառնալ յաւերակ : Առ որ մատուցեալ սիրասուն աշակերտքն իւր հարցանէին ընտանեբար յաղագս Սողոմոնեան զարմանաչէն տաճարին : «Վարդապետ , տես որպիսի՞ են քարինքս եւ որպիսի՞ շինուածք» :

Այլ քեզ , ո՞ր արդ մատուցեալ հարցանիցէ , ո՞վ դու Արծուիդ , որ իբրեւ զբու գիշերաշրջիկ 'ի բարձու դիտանոցիդ այդմիկ նստեալ հայիս 'ի վերայ աւերակացդ եւ մինչդեռ բն ութիւնք սու հասարակ լռեալ դադարին անձայն՝ դու հեծեալ վայես ըստէպ ստէպ : Համբարձ զաչաքո եւ տես ուր պերճացեալ քաղաքն Սիս ,

ուր շինուած Սուրբ Սոփիա տաճարին , որ հանգուենատիպ էր հրաշալւոյն Սողոմոնեան . ուր արքայաչէն պարսպապատ պալատն եւ բիւրաւոր ժողովրդոց բաղմուծիւն , որ իբրեւ զմարախ խուռներամ պատեալ կային շուրջ զլեռնաբերդաւս . ուր առաջին շինուածոցն շուք . ուրմեծամեծ ապարանք իշխանաց . ուր այն ճոխաճեմ հրապարակք . յորս բազմէին պատկառատեսակ հարկեւոր ծերունիք : Եւ պատանիք զուարթադէմ դօտի ածեալ պաշտէին եւ խաղասէր մանկերամիցն հոյք յայսկոյս յայնկոյս ընթանային զուարճացեալք :

Այսպիսի փառազարդ շքեղութեամբ պերճացեալն Սիս , ո՞հ , աւապիկ մերկացեալ տեսանի բնաւին յիւր պանծալի վայելչութենէն եւ որ երբեմն արքայաշուք փառօք պայծառանայր իբրեւ զԵրուսաղէմ կարգեալ 'ի հիացումն տեսողաց . աւանդ , արդ զատեալ մենացեալ քաղաքն բաղմաժողով իբրեւ այրի լցեալ տրտմութեամբ նստի թախձալից սեաւ սգով 'ի միջի Նիւլիկեան նահանգին :

Փոխանակ ութսուն եւ հազար փարթամագոյն բնակչաց , սուրբ երկերիւր տունք մնացեալ կան եւ այն աղքատին յոյժ եւ տառապեալ եւ պարէնի աւուր կարօտ . փոխանակ մեծամեծ ապարանիցն՝ դուզնաբեայ խրճիթք գեղջկական . պակասեալ են ծերքն ալեւոյթ , լցեալ կան հրապարակքն հողով , չերեւին բնաւ տեղիք նշանաւոր :

Օ՛ր քեզ , Արծուիդ իմ , ընդ այդոսիկ եւ եթ ողբալ թողեալ զմեծն՝ առաւել եւս ողբայ դու ընդ հրաշակերտ տաճարն սրբոյն Սոփիայ , որու

երկնակամար խորանն դեռ եւս ան-
մահ է կիսականգուն շնչովն . ոհ , առ
կամարաւս այս խոնարհեալ երբեմն
օծանէին թագապսակ գլուխք Ռու-
բինեան արքայից եւ հանդէսք աշխար
հագումար կատարէին :

Արդ փոխանակ ուրախութեան
օծմանս այսորիկ քուրձ զգեցեալ եւ
սեւաթոյր քօղ զգլխովն արկեալ գե-
ղազարդ վայելապանձ հարան Սոփիա
նստեալ կայ 'ի վերայ միտրոյ 'ի չորեք
հարիւր ամաց հետէ ողբայ զթագա-
զարդ փեսայն իւր անձկալի եւ լայ
զպարագլուարձ խրախացուցիչ ման-
կունս առագաստի իւրոյ . զորս երբեմն
'ի ծնողական մայրենի ծոցն գրկեալ

գորովալիւր գթով տածէր եւ խնամէր
եւ ուրախ լինէր հանապազ ընդ որ-
դիս իւր բազմացեալ : Եղիւ վերջին
թշուառութեանցն . որ հասին 'ի վե-
րայ սորա , յորմէ փեսայն իւր տարա-
բախտ հանդերձ մանկամբք առագաս-
տի վարեցան 'ի գերջացն , եւ ինքն
այսպէս մենաւոր նստաւ այրիացեալ
անմիտութար սգով մինչեւ դարձեալ
եկեցեան անդրէն այցելութեամբ Տե-
առն վերջին փառք տան իւրոյ :

Ղադարեաց դու արդ յողբոյդ ,
Արծուիւր իմ , թող ողբասցէ , որ կան
խաւ քան զքեզ դիպեալ դառն աղե-
տից սղաւոր հարսիդ չափական ձայ-
նիւ ողբազրեաց այսպէս :

ՈՂԻ

Ի ՎԵՐԱՅ ՄԵԾԻ ՔԱՂԱՔԻՆ ՍԱՈՅ

ՀԱՆԵԱԼ Ի ՀԻՆ ՁԵՌԱԳԻՐ ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆԱՅ

— Այլ մեր գոչեմք յոյժ ողբալով եւ հառաչելք արտասուելով .
Յողւոց հանեմք կրակը ելով , զՍիս բաղաքն ափսոսալով :
Է՛ Սիս քաղաք , յոյժ գոչելի , թագաւորաց գահոյք կուգմեալ .
Դու թշնամեաց եղեր մատնեալ , ձեռնն նեղաց քոց քեզ տրեալ :
Դու Սիս քաղաք էիր ընտրեալ , մայր քաղաքաց դու անուանեալ .
Այժմ եղեր դու աւերեալ , յանօրինաց կոխան եղեալ :
Թագաւորն որ 'ի քեզ նշտեալ , երկրորդ սթոռ էր անուանեալ .
Երկու գլխով զինքն յօրինած եւ սուրբ Աջովն հաստատած :
Ճանապարհորդք 'ի քեզ եկեալ , տեսեալ ըզքեզ եւ յոյժ սիրեալ .
Հայոց ազգիս սթոռ շինեալ եւ նոր Հըռոմ ըզքեզ անուանեալ :
Սրբոց մատուց 'ի քեզ բազմեալ , զէտ ըստամբօլ մեծ կայսր եղեալ .
Ըզ դիս կըռոցըն խորտակեալ , ընտուր Սոփի մեծացուցեալ .
Հանդէպ դրոան եկեղեցւոյն յոյժ բարձրագոյն արձան կանդնեալ .
Եւ սուրբ զանգակ 'ի նմա կախեալ Գաբրիէլեան փող անուանեալ :
Հեթանոսաց 'ի քեզ մբտեալ եւ ըզտաճար քո սուրբ պըղծեալ .
Մըրդապահայ խուղ արարեալ եւ ըզդիակունս թրոշնոց արկեալ :

Ջրեւ շուրջ արիւն սրբոց հեղեալ եւ չէր որ, ո՛հ, գնոսին թողեալ :
Առակ դրացեաց քոց արարեալ, շորջակայիցըն ծաղը եղեալ :
Ջերիտասարգս քո հուր կերեալ եւ կուսանաց ոչ որ սգացեալ :
Քահանայքդ 'ի սուր արկեալ զայրիսըն քո ոչ որ լացեալ :
Չայնք սաղմոսաց 'ի քէն հատեալ, եւ պաշտօնեայք քո պակասեալ :
Նուէր սեղանոյդ քո խափանեալ, մարմին արիւն Տեառն ոչ բաշխեալ :
Ժամահարաց երգ ոչ հընչեալ, պատարագունքըն դադարեալ :
Անուշ երգունք արելուից լռեալ խապառ եւ նըւազեալ :
Ո՛հ թէ լինէր Տէր զարթուցեալ իբրու զայր որ զգինին թափեալ :
Ըզ թընամիս քո յետս հարեալ եւ յաւիտեան զքեզ հաստատեալ :
Ե՛ղբարք, եւ զայս մեք յուշ ածեալ, թէ այս նոցա է՞ր պատահեալ :
Ջի սուրբք եղեն յոյժ նըւազեալ ճըշմարտութիւն՝ մարդկան թողեալ :
Ո՛հ առաջնորդքըն մոլորեալ, 'ի սրբութեանցըն հեռացեալ :
Ժամ եւ աղօթք զոր արարեալ, զայն մաքրութեամբ ոչ կատարեալ :
Իշխանք նոցին զուղիղ չդատեալ, զորք եւ զայրին վշտացուցեալ :
Եւ ժողովուրդն առ հասարակ խիստ անօրէն գործս ըստացեալ :
Վասն այն Աստուած յոյժ բարկացեալ եւ ցաւագին պատուհասեալ :
Սաստիկ գանիւ զնոսին տանջեալ իբրու զփոշի հողմով հոսեալ :
Ջայս ամենայն մեք յիշեցեալ, օ՛հ 'ի մեղաց լիցուք մեկնեալ :
Սովորական չարեաց զատեալ, զբարի գործոց բուռն հարեալ :
Յեկեղեցիս յուսով դիմեալ, զաղօթքս ըստէպ մեք կատարեալ :
Ըզ պահըս սուրբ յաւէտ պահեալ, յողորմութիւնսն առատացեալ :
Ջյանցանս յատուկ խոստովանեալ, արտասուելով ապաշխարեալ :
Ջնոսա տեսեալ մեզ ողբմեալ, որ չըլինիմք նոցա նմանեալ :
Մի թէ լինի՝ տէրըն գթացեալ եւ 'ի չարեաց զմեզ պահեալ :
Ի մեզ խնայեալ եւ ողորմեալ, ըզպատուհասըն դարձուցեալ :
Յաստիս ըզմեզ անփորձ պահեալ, 'ի բանսարկուէն միշտ ազատեալ :
Յանօրինացըն պահպանեալ եւ 'ի չարեացըն զերծուցեալ :
Յոգեվարին աւուրն օգնեալ, հրեշտակ բարի մեզ առաքեալ :
Մարմնոյ, արեան Տեառն հաղորդեալ օրհնեալ հողով լիցուք թաղեալ :
Յաւուր մեծի դատաստանին ըզսուրբ եկայքըն մեք լըսեալ :
Յաջակողմեան դասըն կարգեալ, զՏէրն յաւիտեան օրհնաբանեալ :

ԱՋԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ի նախընթաց թիւ Սեպտեմբեր ամսոյն 'ի Ճառին մակագրեալ Եբրայական Հոգի Ժամանակի . երրորդ եւ չորրորդ

մասը յօդուածին պատահամաբ իմն մոռացեալ է 'ի մէջ եւ 'ի տեղի երկրորդ բաժանման՝ երրորդն եղեալ կայ . որով կրճատ իմն եղեալ է ճառն եւ պակաս երեւի ուշադիր ընթերցողին աչաց : Ուստի արժան համարեցաք 'ի

սոյն թերթի կարգ դնել զմնացուածն
'ի լրումն իմաստից ամբողջ ճառին .
յետ այնորիկ դասել զայլ իմն ճառ
գեղեցիկ . թարգմանեալ 'ի նոյն գրա
սէր Յարութիւն Վարդապետէն .
յորում բնագիր հեղինակն ճշգրիտ
օրինակ ընծայե ամենայն ծրնողաց 'ի
մէջ բերելով զեղանակ հայրական կրթ
թութեան որդւոցն Խորայէլացւոց .
թէ որպիսի օրինակաւ հրահանգէին
զմանկունս իւրեանց :

Սանաւանդ Աստուածահաճոյ նա
հապեաքն . որք յաւէտ առաքինի
դաստիարակութեամբ հարստացուցա
նէին զորդիս քան երկրաւոր ընչիւք :

Եւ զինքեանս իսկ կենդանի պատ
կեր կացուցանէին յանդիման որդ
ւոց իւրեանց . ընդ որ հայեցեալ ըզ
հարազատ նմանութիւն ծնողական
նկարէին յանձինս , որ այս իսկ քաջ
երեւի յԱստուածաշունչ գիրսն :

Պաշտօնը Եփրայիմի չափոյ ծամանիլն :

Եւ վախճան եօթն շաբաթական
ամացն , որ է քառասուն եւ իններ
ւորդ տարի՝ կոչելու առ նոսա ամ յո
բեւեան :

Ղ. Այս . Բազմաբնին իմաստունք
միաբանին առ հասարակ , թէ 'ի ժամա
նակէ անտի Մովսիսի հրէական ամիսք ,
որ կանոնաւորեալ էին 'ի ձեռն լուս
նական շրջանաց : Ոչ զի ամն բաժան
եալ էր յերկոտասան հաւասար մասունս
այլ 'ի նոր լուսնոյ 'ի նոր լուսին լրանայ
եւ այսու չափմամբ՝ երեքտասանն առա
ւել մերձ գտանի 'ի տարւոյ քան երկո
տասանն :

Հաւաստի է այս , զի երկատեսակ են
ամիսք . մինն կանոնաւորի 'ի շրջանէ ,
յորում լուսինն ընթանայ զերկրաւն ,

որով ժամանակ բոլոր ընթացից՝ լինի
քսան եւ եօթն օր եօթն ժամ եւ
քանի մի վայրկեան : Իսկ միւսն չա
փի 'ի դարձմանէ լուսնոյ յորոշ դրու
թիւն դէպ ուղիղ արեգականն . յոր
մէ բաղկանայ ամիսն այն 'ի քսան եւ
ինն աւուրց եւ յերկոտասան ժամուց
եւ 'ի քառասուն եւ հինգ վայրկեանէ .
Այս վերջին եղանակ գրեթէ հա
սարակ է 'ի գործածութեան . եւ ժամք
որ յաւելուն քան զքսան օր , փոխա
դարձաբար կազմեն զամիսս , է որ 'ի
քսան եւ ինն աւուրց եւ է որ յե
րեսնից աւուրց :

Ղ. Հրէական փարիս . Չկնի յեղեցն Եփ
րայեցւոցն Եգիպտոսէ առ 'ի պահել
զյիշատակութիւն ազատութեան իւր
եանց՝ փոխեցին զսկիզբն տարոյն եւ
միշտ փոյթ կալան նկատել զառաջին
ամիս տարւոյ . յորմէ կրօնական տա
ղաւաքն իւրեանց նշանակեալ եւ որ
ոչեալ լինէին : Այլ բաց 'ի հասարակ
տարւոյ՝ Հրէայքն ունէին զերկրորդ
տարի մի եւս , որ բաղկանայր յեօթն
ամաց եւ յորժորջիւր առ նոսա շաբա
թական տարի . յորում դադարէր եր
կիրն եւ ոչ երբեք ներեալ լինէր Հը
րէից մշակել , ոչ արօրադրել , ոչ սեր
մանել եւ ոչ յօտել զորթս :

Եւ եթէ երկիրն ինքնին բերէր ինչ
այս ոչ վերաբերէր առ տէր ագա
րագին . այլ հասարակաց էր այն :

Եւ այս հրէայքն պարտաւոր էին
յրնթացս վեց ամաց մանաւանդ 'ի
վեցերորդն , յորում մշակեալ զերկիր
ըտեմարանէին պաշարս , բաւական
լինիլ մինչեւ ցիններորդ ամն , յո
րում սկսանէր առաջին հունձք զկնի
շաբաթական տարւոյ : Եւ որպէս եօ
թն հասարակ ամք բաղկացուցանէ

ին զշաբաթական տարին . այսպէս եւ եօթն շաբաթական ամբ առնեն մի երորդ տեսակ տարւոյ , որ յորջորջւոր առ նոսա՝ ամ յորեւեան :

Արեւիկին որդւոյն Իսրայէլացւոյն :

Իսրայէլացիքն գրեթէ ըստ օրինակի նախնի Յունացն հետամուտ էին կրթել զորդիս . եւ կարի իմն աշխատութեամբ կազմէին եւ կրթէին զմարմինս իւրեանց 'ի գործս արագաշարժութեան եւ զմիտս իւրեանց անձանձիր ընթերցմամբ . եւ երաժշտութեամբ սրբազան երգոց : Ոյժ մարմնոց մեծ համարիւր առ նոսա եւ թեթեւաշարժութիւն ոտից՝ մի էր յերեւելի կրթութեանցն իւրեանց . վասնզի այնպիսի պրնթաց մարդիկք մեծահամբաւ ճանաչէին առ նոսա , որք առաւել քան զձիս արշաւէին . որպէս արքն այնոքիկ , որ բերէին զհամբաւ կոտորածոյ զօրացն վարսագեղոյն Մեհսողոմայ : Դրեալ է վասն Ասայէլի եղբօրն Յովաբայ որդւոյ Հարուհեայ , եթէ թեթեւ էր իբրեւ զմի յայծեմանց 'ի դաշտի : Օրինակն Յովնաթանայ սիրելւոյն Դաւթի եւս յայտ առնէ . թէ սովորեալ էին նաեւ կրթութել զբազուկս իւրեանց 'ի կորովի նետաձգութիւնս . որպէս մինչ թագուցեալն էր Դաւիթ յանդի անդ . Յովնաթան նշան տայր նմա ասելով պատանեկին իւրոյ . « Ի քէն եւ անդր կամ այսր է փքինն » :

Այլ զկրթութիւն մարմնոյ ոչ 'ի կիր արկանէին յանարգ գործս ըստ օրինակի Յունաց . քանզի Եբրայե-

ցիքն լուրջ ժողովուրդ էին եւ քաջապէս նկատէին զայսպիսի կրթութեանց զվախճան : Տեսին զի այսպիսի ընթացք վարժութեան վայրագ գործէր զմարդն եւ անպատշաճ առ բարձրագոյն կրթութիւնս մտաց . ուստի պարտ եւ անհրաժեշտ համարէին անձանց , կալ 'ի հանապազօրեայ աշխատութիւն 'ի գործ բանակի 'ի մշակութիւն դաշտաց առ 'ի վարժ եւ պատրաստի գտանել յայնպիսի կենցաղագուտ գործս , որ պիտոյ լինէր ըստ պահանջման ժամանակին եւ 'ի սոյն պիսի շահաւետ հրահանգս դաստիարակէին զորդիս :

Հաւանական է , զի բազումք 'ի նոցանէ մարզեալ էին 'ի դպրութիւնս գրոց քանզի հրամայեալ էր ամենեցուն ուսանել զօրէնս Աստուծոյ եւ խորհիլ 'ի նա 'ի տուէ եւ 'ի գիշերի , եւ ուսումն այս էր միայն Աստուածահաճոյ զբաղումն յաւուրս շաբաթու . Գլխք օրինաց բաւական էր կրթել զնոսին յամենայնի , զոր կամէին գիտել . յորում ընթերցեալ տեսանէին զառ 'ի Մովսիսէ գրեալ զպատմութիւն աշխարհի մինչեւ 'ի զետեղումն իւրեանց յերկիրն Աւետեաց : Յաշխարհապատում գիրս Մովսիսի պարու նակեալ կայր սկիզբն եւ ծագումն ամենայն ազգաց , զորս ճանաչէին եւ մանաւանդ ազգացն այնոցիկ , ընդ որս ունէին զընտանեկան յարաբերութիւնս . որպէս սերունդք Աբրահամու , ընդ Դովտայ , Իսահակայ՝ ընդ Իսմայէլի , Յակոբու՝ ընդ Եսաւայ : Անդ 'ի գիրս գտին զամբողջութիւն կրօնին իւրեանց զվաղապետութիւնս նորա , զարարողութիւնս եւ զբարոյական խրատս . յորոց քաղե-

ցին զքաղաքական օրէնս : Բնաւ ա-
մենեւին չէ հաւանական թէ Իսրայ-
էլացիքն ուսեալ էին զգիրս օտար
ժողովրդոցն . քանզի այնպիսի ուսումն
հարկ էր առաջնորդել զնոսա յընթեր-
ցումն պատմութեանց երկրպագու-
թեան չաստուածոցն . յորոց այն-
քան գարշեալ խորշէին մինչ զի անհր-
նար էր նոցա արտասանել զանուն
սուտ աստուածոց : Այլ ընդ հակա-
ռակն փոյթ եւ ջան մեծ էր նոցա
զճմարտութիւնս պատմել որդւոց
իւրեանց պատրաստել զսիրտս նոցին
յերկիւղ եւ 'ի սէր Աստուծոյ :

Ամենայն աւանդութիւնք իւրեանց
'ի նախնի դարս ազնիւ եւ պիտանի է-
ին եւ սէր մեծ ունէին ուսուցանելոյ
զբարոյական ճմարտութիւնս . զոր
օրինակ զառակս կամ զխրթնաբանու-
թիւնս . զորս 'ի յիմաստս հակիրճ
բանից ամփոփեալ յօրինէին առ 'ի
յանդիման կացուցանել զգաղափար
կամ զխորհուրդ մտաց գերազանց
կերպիւ , որ դասաւորեալն էր յարմա-
րաչափ բանիւք :

Բազում առածք եւ առակք նոցա
եթէ թարգմանեցին յօտար լեզու
ոչ ընդ երկար պահեն զձեւս իւր-
եանց . կորուսանեն թէպէտ եւ
զչափն տակաւին բաւական եմք
նշմարել զհրաշալի երգս 'ի բազում
տեղիս Աստուածաշունչ տառից , որ
հրուշակ հարկանեն զերեւելի անցից
նոցա : Այսպիսի են երգք եւ օրհնու-
թիւնք Մովսիսի յանցանքն ընդ ծով
կարմիր , եւ օրհնութիւնքն Դէբորա
եւ Աննայի ընդ այլոց բազմաց . մա-
նաւանդ երգ երգոց օրհնութիւնք
Սողոմոնեան եւ Դաւթեան սաղմոսք :

Ոչ նշմարեմք երբէք թէ Իսրայէ-

լացիք ունէին հրապարակական դրոյ-
րոցս . բայց միայն վասն բարձրագոյն
ուսմանց մարգարէաճառ բանից եւ
Մովսիսագիր օրինաց , յորս պարտ
էր ըստ ամենայնի վարժիլ քահանայ-
ից դասուց : Այլ երիտասարդքն առ
հասարակ ուսանէին 'ի հարցն իւր-
եանց առ տնին մինչ դեռ աշխատէին
'ի զանազան զբաղմունս ընտանեաց
եւ կրէին զընտանեկան հոգս ընդ հարց
իւրեանց : Որով դոգ թէ իւրաքան-
չիւր տուն առանձին դպրոց իմն
ձեւանայր , յորս բազմէին պատկառ-
ելի հարք իբրեւ վարժապետ եւ դաս-
տիարակիչ որդւոց իւրեանց :

Այսպիսի էր ահա պարզ յընթացս
կենաց իւրեանց եւ այսպիսի օրինա-
կաւ վարժէին զորդիս եւ բարւոք
հրահանգեալ էին յամենայն ճանա-
պարհս կրթութեան օրինաց . յորս
կամէին երթալ եւ բազումք 'ի նոցա-
նէ երջանիկ լեալ էին յայնպիսի առ-
աքինի վարս եւ յօրինապահութիւնս
եւ երթային միամտութեամբ 'ի շա-
ւիղս օրինացն Աստուծոյ . յորոց եր-
բէք ոչ խոտորեցան մինչեւ ցլախճան
իւրեանց . թէպէտ շատք եւս յորով
անգամ խոտորեալ 'ի նոյն ճանապար-
հէ օրինաց եւ միոյն Աստուծոյ ճմար
տի երթային կամակար զհետ աստու-
ածոց օտարաց . որով պատուհասեալ
դառնային անդէն բազում ստրջանօք :

Թ . Յանգւ Յ . Վ . Վ .

Նոր ճաշակ մի եկեղեցական երգոց :

Այլ հոգեւորական երգոց , ար-
դարեւ առաւել յորդորեալ էր 'ի սիրտ
երանելի իմաստուն հարցն եւ հոգե-

չնորհ վարդապետացն մերոց : որով վառեալ ի ժամանակս ծաղկեալ Դըպլոմեան Հայկական տառից հրաշագիր մատամբ իւրեանց գեղահիւս յօրինեցին զպէս պէս քաղցրանուագ երգս շարականաց յարմարեալ սքանչելի եղանակօք . զորս յետնորդ մանկունք եկեղեցւոյ , ի բերան առեալ պաշտեն զՏէր հանապազ ըստ նմանութեան երկնաւոր դասուց փառաբանիչ հրեշտակաց . յորմէ շարժեալ սիրտ ջերմեանդ հաւատացելոյն՝ առաւել եւս փափագանօք բերի առ Աստուած եւ առ սիրելի Սուրբս նորին :

Այս իզճ երկնաւոր հոգեշարժ սիրոյն բազմադիմի էր ի սիրտս երանելեացն այնոցիկ . ուստի իւրաքանչիւրքն նոքին փութացան ըստ յօժարութեան սրտից իւրեանց շարել յեռուլ զմեծալայելուչ դրուատիւ աւանց պատուականաց . ոմանք ի գերահրաշ տնօրէնութիւնն Աստուածային . ոմանք ի յանարատ Արքայն ամենօրհնեալ : եւ այլ ոմանք ի դասըս երջանիկ սրբոց եւ մանաւանդ ի բիւրաւոր արիւննազարդ մարտիրոսացն երամս :

Այսպիսի նոր իմն փափագանօք լցեալ ի յետին ժամանակս նախնի հարցն հետեւող ծերունազարդ Աբրահամ վարդապետն լոստանդնուպօլսեցի , որ յառաջ միաբան լեալ էր ի գերահռչակ ուխտն Լմայ սուրբ Անապատին եւ անդ իսկ ձեռնադրեալ : Վասն որոյ ի պատիւ սրբոյն Գէորգայ քաջայաղթ հրաշագործ վկային եւ ի նշան հայրենապարտ երախտագիտութեան իւրոյ յօրինեալ է զսոյն շարական , որ եթէ ըստ արուեստին չհա-

ւասարի նախնեաց հրաշակերտ շարականաց . բայց ըստ մեծի տենչալիւր ոգւոյ հոգեւանդն հեղինակին , չհամարի ինչ պակասութիւն արուեստին առաջս սիրողաց եկեղեցական երգոց :

Արժանի է գովութեան յիշեալ վկայասէր հեղինակն , որ յալիս ծերութեան հասեալ ընդ գաւազանակիր դողդոջուն ձեռացն՝ կրէ եւ զգրիչն եւ զայսպիսիս յօրինել ոչ համարի ձանձրութիւն բազմամեայ ծերութեանն . ի յորդոր եւ միանգամայն խթան ժրագունիցն այնոցիկ , որք դանդաղին առնուլ զգրիչն ի ձեռս :

Յանկալի էր մեզ եւ երգասէր ընթերցողացն եթէ եղանակաւոր խազիւքն հրատարակեալք , որպէս նշանակեալ էր հեղինակն . սակայն չունելով պատրաստ ի ձեռին զարականաց խազն՝ հարկեցաք այսպէս հրատարակել . զոր հմուտ երգիչն՝ կարէ նաեւ առանց խազից եղանակել :

Եւ այլ շարական , վաղուրեմն յօրինեալ ի հեղինակէս առ նախկին Լուսաւորիչն Հայաստանեայց Թադէոս եւ Բարդուղիմէոս . զոր յայլում թերթի ունիմք հրատարակել . զի մի կորիցեն արդիւնք աշխատասէր ծերունւոյս :

Այրանի թէ ազգասիրաց ջանիւք ի լոյս ելանէին եւ այն երկու հատոր մեկնութիւնք աւետարանեացն Մարկոսի եւ Յովհաննու . զորս համառօտ եւ զգուշաւոր խորհրդածութեամբ գրեալ է ի խնդրոյ աշակերտաց իւրոց վաստակասէր վարդապետս :

Բայց աւաղ , թէ եւ ինքն անծանօթ կայ ի յ() շական գիւղն իբրեւ զխորենեան ձերն :

ՇԱՐԱԿԱՆ

Ի ՊԱՆԶԱԼԻ ՎԿԱՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒԲՆ ԳԷՈՐԳ

Օրհնութիւն երբոր Զայն 1

Յայգի Տեառն զօրութեանց՝ բրտնաջան մշակն անխոնջ սուրբն Գէորգիոս . որ վաղ քաջ ընդ առաւօտն յարուցեալ 'ի գործ շահեկան . ողորմութեամբ քով Տէր՝ աղինասարաս ընդոյն զարդարեաց անթառամ ծաղկովք . մաղթանօք սորա խնայեա 'ի մեզ :

Որ քոյով զօրութեամբ գօտէպինդ շահատակեալ . եւ աներկիւղ յաւուրն ծանրութենէ եւ տօթոյն . զի ոչ 'ի սակ դահեկանին էր յուսացեալ . այլ արդարութեամբ երեւեցի երեսաց քոց , եւ յագեցի յերեւիլ փառաց միածնինդ . մաղթանօք սորա" :

Որ ըզբազում գաւառօք սրխարի եցոյց ողորմութեամբըդ քո՝ ծագմամբ իւրով ըզհայրենին իւր 'ի Վապարովկիա ըզՄաթաք . որպէս Տէրըդ մեր , ան ճառելի ծըննդեամբըդ ըզԲեթղէհէմ օրհնեալ սրբեցեր . մաղթա" :

Որ հաւատովն Սուրբ Երրորդութեանդ . եւ խաչիւ քո Քրիստոս , ըսպառազինեալ պանծալի ցուցաւ 'ի մեջ լէզէոն զօրաց . ըստ Տարսնացւոյն հոգեշունչ բանին աստղ քան զաստղ առաւելուլ փառօք . մաղթա" :

Որ հանգոյն Մովսիսի՝ վայելուչ համարեալ ըզնախատինքս . Քրիստոսի եւ չարչարել ընդ ժողովրդեան Աստուծոյ . ոչ հանդուրժեալ անօրէն հրամանին . վառեալ նախանձու՝ քան ըզշանթ խրտագոյն ծաղու ըզբընակալ ինքնակարաց առեալ ըզթագ եւ ըզդաւազան . մաղթա" :

Որ կայտառ տիօքն Քրիստոսագօր՝ իբր անմարմին ոմնն երկնաւոր . դիմազրաւ լեալ անվեհեր 'ի հընոց հալածանաց ժանտ բռնաւորաց՝ 'ի ըսիտփանքս կապելոց 'ի նմին՝ հօտին Քրիստոսի . զի ըզճըշմարիտ Աստուածութիւնըդ միաբան օրհաբանեցեն սրբասաց երգովք . մաղթան" :

Որ ըզպատկեր մեծի գազանին ասպագայի , Դէոկղետիանոս եւ Ապոլոն՝ երկուց անըզգայից . դէմ յանդիման նըզովելով աներկեւան քաջութեամբ . եւ ըզՍուրբ Երրորդութիւնըդ խոստովանէր՝ 'ի յաւիտենից յաւիտեանս ամեն նազօր անմահ ճըշմարիտ Աստուած . մաղթա" :

Որ ըզգեցուցեր ըզզօրութիւն 'ի բարձանց՝ սիրելի ծառայի քոյ եւ վըկայի Սրբոյն Գէորգայ . որով եկաց չարչարելի մարմնովն անգըծելի 'ի յոգի՝ 'ի բուռն ներգործութենէ հըրապուրանաց աստի փափկութեան . քան զամենայն կուռ անդամանդրա . բարեխօսութեամբ սորա խնայեա 'ի մեզ մարդասէր :

1Եշանալ սորին յարմարի 'ի գոյն Հարախանին ԱՐԵԳԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ "Է
է իսնոն չոգեգալսեան չորրորդ առաջին :

Որ ի սկզբն եղելութեան արարածոց՝ կարգեաց ի յերկինքս զանմարմին զօրութիւնս ի հանդէս փառաց Աստուածութեան իւրոյ. նոյն ինքն հաճեցաւ եւ ի յերկրի ընտրել իւր զինաւորս. Տէր Աստուած հարցն մերոց :

Որ սրխարի նախանձու ըսքանչացոյց ըզհրեղինաց զօրութիւն ի հանդէս նահատակութեան յաղթականի Սրբոյն Գէորգայ. զոր մարմնով եւ արեամբ արար կըցորդ իւր չարչարանաց. Տէր'' :

Որ ընդդէմ զինու զինուորութեան մարմնականի՝ իբրեւ ընդ ծաղիկըս դաշտաց զուարճանայ զօրութեամբ խաչի քո Քրիստոս. որպէս եւ դու ըզ ժամ չարչարանաց քոց՝ օր ուրախութեան փեայի ցուցեր. Տէր'' :

Գործ'' : () Երհնեցէք ամենայն գործըք Տեառն ըզհանդիսադիրն սրբոց վրկայից. գովեցէք եւ բարձր արարէք հոգեւոր երգովք :

Եկայք խաչազէն զինուորակիցք սրբոյն Գէորգայ. յաւուր տօնի մեծի վրկայիս, պարառեալ ցընծութեամբ քաղցրաձայն երգովք օրհնեցէք. գովեցէք եւ բարձր արարէք ըզչայրն երկնաւոր :

Ի հրնչել փողոյ ի հանդէս հոգեւոր մարտին, զինուորեալքդ ընդ դրօշակաւ Տէրունական խաչին ըզգօրագլուխն երկնից ըզՔրիստոս. սրբաասացութեամբ օրհնեցէք. եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան :

Որք վերակոչեցայքդ հոգւով օծութեամբ ի ճշմարիտ օծելոյն ի հաղորդութիւն. քահանայք՝ յաւուր տօնի մեծի վրկայիս. բարեբանեցէք հոգւով ըզհոգին Աստուծոյ եւ բարձր'' :

Մեծայո'' : Թագուհի հրեշտակաց եւ մարդկան. եւ մայր մարդացելոյ Աստուծոյ բանին ըզքեզ երանեն ամենայն ազինք :

Դրախտ Աստուածախնամ անթառամ ծաղիւք անբիծ կուսութեան աճեցեալ եւ բարձրացեալ ի ծագըս երկնից. ըզքեզ եր'' :

Խորան Աստուածընկալ եւ տապանակ սրբութեան Հայրական դանձուն, միածին Որդւոյն ըզքեզ եր'' :

Ողբ'' : Եննախանձ պարգեւաց բաշխող ամենակալ Աստուած հրգօր, որ ի սուրբըս բընակես եւ ըստ բարձրութեան քում մեծըս առնես դու զորդիս մարդկան. աղաչանօք մեծի վրկայիս քո ողորմեա մեզ :

Որ քոյին զօրութեամբդ արիացեալ սրբոյն Գէորգայ. այպանեաց նազելի պանծանօք ըզդիցապաշտ ազանց ըզմոլեգնութեանըն խրրոխտ բըռնութիւն. աղաչ'' :

Որ երկնաձիր իմաստութեամբըն խընոյր ըզլսեղիս իւր՝ ընդդէմ թովիչ փաղաքանաց խորամանկ օձին, եւ հրաբորբօք սիրով քո անգոսնեաց զաղբեղէն պարգեւաց ըզխոստումն. ճըգնութեամբ սորա ողորմեա մեզ :

(Մնայեալն որիւն անգամ :)

Նոր Գործարանի պայագրումիւն Արծուին
Վասպուրականի

Երջանիկ եւ բարեբախտ կը համարի զինքն Արծուին Վասպուրական . որ փոքր ժամանակի մէջը իր ազգասէր բաժանորդներուն առատաձեռն սատարութեամբ եւ զինքը թողցանող հայրենասիրի մի անխոնջ եւ անշահասէր ջանիւք . կարող կըլինի այս ուհետեւ իւր քրտանց վաստակով ստացած մամուլին թեւերով թռչիլ : Առ այժմ հազիւ հազ Պօլիսէն միջեւ Յիւսէփիւտար թռչելու կարողութիւն ունեցաւ եւ իր բոյն դնել ուղեց ամենաբարձր ծառոյն վրայ , մեծաթեւ Արագլին պատասխարիչ բունին քովը . այսինքն Իւսէփիւտարու Սուրբ Խաչ եկեղեցւոյն հովանեաց պաշտպանութեանը ապաստանելով՝ իւր փոքրիկ տպարանը հոն հաստատելու պատշաճ համարեց :

Իայց մեր վաղեմի փափագը այս է որ քիչ ժամանակէն զինի Աստուծոյ յաջողութեամբ Ասիոյ վերջի եւ զերբէն՝ Հայաստանին կեդրոն փոխադրուի . այսինքն Վասպուրական գաւառին յարմարագոյն եւ ապահով վանքի մի մէջը : Սակայն ազգասէր խելացի գլուխներ պիտի մտածեն իրենց խնայողութեամբ թէ որչափ հեռաւորութիւն ունի Վասպուրական գաւառն Բիւզանդիոնէն , այնչափ դժուարին է այսպիսի գործարան մի այն տեղ փոխադրել թէ եւ խիստ փոքրիկ եւ չափաւոր : Չեմ յիշեր այս տեղը ուրիշ զանազան դժուարութիւններ , որոնք լեռան պէս մարդուն դիմաց ելլելով կարգելեն գործի մի յառաջադիմութեան ըն-

թացքը : Սակայն այս բոլոր դժուարութեանց պիտի յաղթէ հայրենասիրութեան եռանդն , մշտապէս աշխատութիւն , անխռովութիւն սրտի , համբերութիւն ձախորդութեանց , զօրաւոր դիմադրութիւն հակառակ հողմոց , երկարախորհուրդ խոհեմութիւն ձեռնարկեալ վործոց , Հայկազուն ազգասէր իշխանաց խրախուսական յորդորանք եւ առատաձեռն նուէր . եւ մանաւանդ Աստուածային ամենահաս ձեռաց օգնութիւնը , որուն աւելի ապաստան ըլլալ պէտք է քան թէ ամենատկար ձեռաց մարդկային :

Արծուին Վասպուրական իր ցանկալի նպատակին շուտ հասնելու ամենեւին չպիտի վհատի կամ թուլնայ իւր առաջադիւր յոյսէն . թէ որ զօրավիգ եւ ձեռնտու թեւ չունենայ բարձրաթուիչ սրնթացութեամբ իւր հայրենի բնակամուտնդ գաւառին մայրենի գիր կը դիմելու , պիտի գետնի վրայ տկարաթեւ թռչունի մի պէս քիչ քիչ թռչելով կամ մարախի պէս ոտոտտելով մինչեւ որ հասնի Արծուին տան իւր բնիկ բոյնը : Վամ հանձարաւոր Թեոսաւրոսին խրատը մտածելով . եթէ որ չկարենայ իր հայրենասիրական նաւը յառաջ վարել առաջաստալիւ հողմով՝ կիսաբացիկ առաջաստալ պիտի ընթանայ , եթէ որ անով ալ չի կարենայ . պէտք է որ առագաստը ժողովէ եւ թիակներ ձեռքն առնելով կամայ կամաց դժուարին եւ տաժանելի նաւարկու թեամբ Բզնունեաց ծովուն նաւահան դիստ հասնելու ջանք ընէ թէ եւ խիստ անագան :

Իսկ Աստուած , որ միշտ այցելու

եղերէ Հայաստան տշխարհին մերոյ
եւ այն գործը , որ իր ամենաբարի
կամաց հաճոյ է , աներկբայ յուսով
կը հաւատամք որ պիտի կատարէ ան
կարծելի կերպով եւ իր քաղցր զթաւ
թեան արեւը դարձեալ պիտի ծագէ
հանուր Հայաստանեայց վրայ : մա-
նաւանդ Տարօնոյ , Վասպուրական
եւ Մոկաց գաւառներուն անտէրունչ
ժողովրդոց . եւ այնչափ գիւղացի ման-
կըսներուն . որոնք ոչ զպրոց մի ,
ոչ դաստիարակ , եւ թէ ոմանք բա-
րեբախտաբար ասոնք ունենան ալ ,
դարձեալ մեծ մասն չքաւոր լլայլով կը
կարօտին թերթիկ մի թղթոյ քերա-
կանին , որ իրենց նախակրթութեան
միջոց մի ըլլայ :

Ուստի անհրաժեշտ պարտք է բո-
լոր քաղաքացի իշխանաց . որոնք որ
կարող եւ ձեռնհաս են՝ բարիք ընելու
համազգի գիւղացւոց կրթութեան
համար ըստ ամենայնի հոգ տանել .
վասն զի դպրոց , ուսումն , վարժա-
պետ , ազգասիրութիւն , միայն քա-
ղաքացւոց համար չէ , քաւ լլցի ,
ասիկայ մտածող ճշմարիտ ազգասիր-
ութեան կաճառներէն դուրս է , եւ
միայն անձնասէր եւ փառամոլ մտօք
կըխորհի : Թէպէտեւ մաթէմատիքա-
կան բարակ ուսմունքներ պէտք չեն
գիւղացի ժողովրդոց . սակայն ամե-
նամեծ գիտութիւն եւ բարձրագոյն
ուսումն առանց խտրութեան բոլոր .
մարդոց պէտք են : Ի՞նչ է , գիտու-
թիւն Հաւատոյ վարդապետութեան
Քրիստոսական կրօնին եւ կրթութիւն
կենցաղօգուտ բարի վարուց առաքին
ութեան , որով կըլլայ մարդ՝ ճշմա-
րիտ Քրիստոնեայ եւ կատարեալ
մարդ :

Կըսէ բարոյասէր Թեոսաւրոսն .
« Եւ ամօթ մեծ է լինել տգէտ .

այլ ամօթ մեծ է լինել նոցա մոլի .
զի ամենեքին չեն պարտաւոր լինել
գիտուն . այլ պարտաւոր են ամենե-
քին լինել բարի » : Աւանդ , այս
ճշմարիտ եւ պիտանի բարիքներէն
զրկուելով առ հասարակ Հայաստան-
եայց գիւղերը ամէնքն ալ յետին
խեղճութեան հասնելով՝ ողորմելի
կիանք մի կը վարեն հոգեւորապէս եւ
մարմնաւորապէս , որոնց դառն վի-
ճակին վրայ ուրիշ անգամ գրեւոր
պարտաւոր եմք :

Ո՞ր հայրենասէր սիրտ , որ ազգա-
սէր աչք տոյն համազգի ժողովրդոց
նեղութիւն եւ տառապանք տեսնալով
ցաւ չիզգար . արտասուք չիթափեր .
կամ այն Մովսէս մարգարէին պէս
Աստուծոյ ժողովրդեան անտանելի
չարչարանաց չկրնալով հանդուրժել
իր անձը անոնց վրայ դնելով՝ պանդխ-
տութիւն ելլել պարտ չիսեպեր :

Ա՜հ , Հայաստան , քու ժողո-
վուրդ սիրող Մովսիսներ շատ էին
երբեմն . որոնք իրենց անձը մինչեւ
ի մահ վրա դնելով՝ մեռան . դու
եղկելիդ առանց Մովսիսներու մնա-
լով այդպէս կը չարչարուիս :

Եւրբ իցէ , որ Աստուծոյ այցելու
թիւն Մասիս լեռան գլուխը երեւ-
նալով՝ քեզի այցելու եւ փրկիչ Մով-
սիսներ առաքէ : Արդարեւ ցանկա-
լիդ իմ , Հայաստան , քու սէր կըստի
պէ զիս , խեղճ ժողովուրդիդ մեր
չափէն աւելի ետքի՞ դարուս մէջը
նոր Մովսիսիկ մի ըլլալ թէ եւ փոքր ,
ամենատկար եւ ծանրախօս . Թէպէտ
անարժան գոնուելով հրաժարել
պէտք է այս մեծ անունէն . բայց
որովհետեւ Աստուծոյ զօրութիւնը
միշտ մեզի օժանդակ բռներեմք . լի
յուսով կը հաւատամք , որ ինքն յա-
ջողէ ու կատարէ մեր փափագը , որ
միայն մեր հայրենակից գիւղաբնակ
եղբարց լուսաւորութեան համար է :

ՅԸՆԿ

ՊԱՐՈՒՆԱԿԵԱԼ ՆԻԹՈՑ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

Ճանապարհորդութիւն ՚ի Սիւս	65
Ողբ ի վերայ մեծի քաղաքին Սոյ հանեալ ի հին ձեռագիր յիշատակարանաց	71

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ազդարարութիւն յաղագս Եբրայական չափոց ժամանակի	72
---	----

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Կրթութիւն որդւոցն Իսրայէլացւոց	74
Նոր ճաշակ մի եկեղեցական երգոց	75
Շարական ի պանծալի վկայն Բրիտտոսի սուրբն Գեորգ	77
Նոր գործարան տպագրութեան Արծուոյն վասպուրականի	79

ՊԱՅՄԱՆՔ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Տարեկան գին 40 ղրուռուշ:

Միամսեայ տեսրակին 4 ղրուռուշ:

Պօլսէն դուրսը երթալու ճամբուն ծախքը առնող պիտի վճարէ:

ՏԵՂԻՔ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՍՏԱՅՄԱՆ

- Ի Պօլիս գրաւճառ պարոն Յարութիւնին եւ պարոն Պազտասարին սենեակները որ ՚ի Մէրճան:
- Ի Զմիւռին ուսումնասէր Պարոն Սարգիս Գրիգորեան տէր Յովհաննու Միրզայեանց վանսիւքցի:
- Ի Կարին տէր Ներսիսեանց մեծարդոյ Խաչատուր խան:
- Ի Վան Թերլմեզեան պարոն Մէրտիչ: